ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*06 ապրիլի 2021թվականի N 459*

## *ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ, 24-րդ կետերի, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջների և Կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 24-րդ կետի 3-րդ ենթակետի.*

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ ՝*

*1.Հրազդան համայնքին սեփականության իրավունքով պատկանող Հարավային թաղամասում գտնվող 500.0քմ մակերեսով 0683-0009,0010,0011 ծածկագրով հողամասին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, քաղաք Հրազդան,Հարավային թաղամաս, Երևանյան փողոց 33/5:*

*2.Հրազդան համայնքին սեփականության իրավունքով պատկանող Հարավային թաղամասի Երևանյան փողոց 33/5 հասցեում գտնվող 500.0քմ մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը բնակավայրերի այլ հողերից փոփոխել բնակելի կառուցապատման:*

*3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝* *Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ*

*06 ապրիլի 2021թ.*
*ք.Հրազդան*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *Ո Ր Ո Շ Ու Մ*

*06 ապրիլի 2021թվականի N 460*

### *ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 45-րդ հոդվածի 1-ի մասի 4-րդ կետի, հիմք ընդունելով դիմումատուի հայտը և Հրազդան համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 14-ի N 147-Ն որոշմամբ հաստատված հավելվածը.*

*<u>Ո Ր Ո Շ Ու Մ Ե Մ</u>՝*

*1.Անհատ ձեռնարկատեր Լուսինե Մինասյանին տալ հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվություն՝ մինչև 2021 թվականի հունիսի 30-ը՝ երկրորդ եռամսյակի համար /գրանցման հասցե՝ քաղաք Հրազդան, Միկրոշրջան թաղամաս 88/47, գործունեության հասցե՝ քաղաք Հրազդան, Բաղրամյան թաղամաս Պուրակային փողոց-36 հանրային սննդի օբյեկտ՝ հիմնական շինություն, մինչև 26 քառակուսի մետր մակերես/:*

*2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:*

***ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝*** ***Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ***

*06 ապրիլի 2021թ.*
*ք.Հրազդան*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*07 ապրիլի 2021թվականի N 461*

*ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, հիմք ընդունելով դիմումատուի հայտը և Հրազդան համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 14-ի N 147-Ն որոշմամբ հաստատված հավելվածը.*

*<u>Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ</u>՝*

*1.Անհատ ձեռնարկատեր Անահիտ Մարգարյանին տալ ոգելից խմիչքների վաճառքի թույլտվություն մինչև 2021 թվականի հունիսի 30-ը՝ երկրորդ եռամսյակի համար:*
*2.Անհատ ձեռնարկատեր Անահիտ Մարգարյանին տալ ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների (բացառությամբ բժշկական նշանակության ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների) վաճառքի թույլտվություն մինչև 2021 թվականի հունիսի 30-ը՝ երկրորդ եռամսյակի համար /գրանցման հասցե՝ քաղաք Հրազդան, Կենտրոն թաղամաս 44ա/17, գործունեության հասցե՝ քաղաք Հրազդան, Կենտրոն թաղամաս 96 շենք հարող տարածք, առևտրի օբյեկտ՝ հիմնական շինություն, մինչև 26 քառակուսի մետր մակերես/:*
*3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:*

***ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝*** ***Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ***

*07 ապրիլի 2021թ.*
*ք.Հրազդան*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ


2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1

(0223) 2-23-45, info@hrazdan.am


## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*07 ապրիլի 2021թվականի N 462*

### *ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, հիմք ընդունելով դիմումատուի հայտը և Հրազդան համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 14-ի N 147-Ն որոշմամբ հաստատված հավելվածը.*

## *<u>Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ</u>՝*

*1.Անհատ ձեռնարկատեր Անգին Բաբաջանյանին տալ ոգելից խմիչքների վաճառքի թույլտվություն մինչև 2021 թվականի դեկտեմբերի 31-ը՝ տարվա համար:*

*2.Անհատ ձեռնարկատեր Անգին Բաբաջանյանին տալ ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների (բացառությամբ բժշկական նշանակության ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների) վաճառքի թույլտվություն մինչև 2021 թվականի դեկտեմբերի 31-ը՝ տարվա համար /գրանցման հասցե՝ քաղաք Հրազդան, Միկրոշրջան թաղամաս 49/9, գործունեության հասցե՝ քաղաք Հրազդան, Միկրոշրջան թաղամաս 44 շենք, 1-ին հարկ առևտրի օբյեկտ՝ հիմնական շինություն, մինչև 26 քառակուսի մետր մակերես/ :*

*3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:*

***ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝*** ***Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ***

*07 ապրիլի 2021թ.*
*ք.Հրազդան*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*07 ապրիլի 2021թվականի N 463*

## *ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, հիմք ընդունելով դիմումատուի հայտը և Հրազդան համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 14-ի N 147-Ն որոշմամբ հաստատված հավելվածը.*

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝*

*1.Անհատ ձեռնարկատեր Լալա Հարությունյանին տալ ոգելից խմիչքների վաճառքի թույլտվություն մինչև 2021 թվականի հունիսի 30-ը՝ երկրորդ եռամսյակի համար:*
*2.Անհատ ձեռնարկատեր Լալա Հարությունյանին տալ ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների (բացառությամբ բժշկական նշանակության ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների) վաճառքի թույլտվություն մինչև 2021 թվականի հունիսի 30-ը՝ երկրորդ եռամսյակի համար /գրանցման հասցե՝ քաղաք Հրազդան, Կենտրոն թաղամաս 14/24, գործունեության հասցե՝ քաղաք Հրազդան, Կենտրոն թաղամաս 32 շենք, 1-ին հարկ առևտրի օբյեկտ՝ հիմնական շինություն, մինչև 50 քառակուսի մետր մակերես/:*
*3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:*

***ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ***

*07 ապրիլի 2021թ.*
*ք.Հրազդան*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*07 ապրիլի 2021թվականի N 464*

## *ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> օրենքի 9-րդ հոդվածի 14-րդ կետի, հիմք ընդունելով դիմումատուի հայտը և Հրազդան համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 14-ի N147-Ն որոշմամբ հաստատված հավելվածը.*

*<u>Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ</u>՝*

*1.Անհատ ձեռնարկատեր Գևորգ Հարությունյանին տալ 2 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով արտաքին գովազդ տեղադրելու թույլտվություն 2021 թվականի ապրիլ ամսվա համար: Գովազդի տեղադրման հասցեն՝ քաղաք Հրազդան, Անդրանիկի պողոտա շենք 122:*
*2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:*

***ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝*** ***Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ***

*07 ապրիլի 2021թ.*
*ք.Հրազդան*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*07 ապրիլի 2021թվականի N 465*

*ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ*
*ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> օրենքի 9-րդ հոդվածի 14-րդ կետի, հիմք ընդունելով դիմումատուի հայտը և Հրազդան համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 14-ի N147-Ն որոշմամբ հաստատված հավելվածը.*

*<u>Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Ե Մ</u>՝*

*1. «Ինեկոբանկ» փակ բաժնետիրական ընկերությանը տալ 5,25 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով արտաքին գովազդ տեղադրելու թույլտվություն 2021 թվականի ապրիլ, մայիս, հունիս ամիսների համար: Գովազդի տեղադրման հասցեն՝ քաղաք Հրազդան, Կենտրոն թաղամաս, Օգոստոսի 23, 46/100:*
*2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:*

***ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝*** ***Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ***

*07 ապրիլի 2021թ.*
*ք.Հրազդան*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

---

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*07 ապրիլի 2021թվականի N 466*

### *ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 45-րդ հոդվածի 1-ի մասի 4-րդ կետի, հիմք ընդունելով դիմումատուի հայտը և Հրազդան համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 14-ի N 147-Ն որոշմամբ հաստատված հավելվածը.*

*Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Ե Մ ՝*

*1.Անհատ ձեռնարկատեր Սուսաննա Խաչատրյանին տալ հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվություն՝ մինչև 2021 թվականի հունիսի 30-ը՝ երկրորդ եռամսյակի համար /գրանցման հասցե՝ քաղաք Հրազդան, Ավետիսյան փողոց 3, գործունեության հասցե՝ քաղաք Հրազդան, Շահումյան փողոց 62/1, հանրային սննդի օբյեկտ՝հիմնական շինություն, մինչև 26 քառակուսի մետր մակերես/:*
*2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝* *Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ*

*07 ապրիլի 2021թ.*
*ք.Հրազդան*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*08 ապրիլի 2021թվականի N 467*

*ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 31-Ի N 440 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի.*

*Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ`*

*1.Ուժը կորցրած ճանաչել Հրազդան համայնքի ղեկավարի 2021 թվականի մարտի 31-ի «Ինքնակամ կառուցած առևտրի, հանրային սննդի և կենցաղային սպասարկման շենքի օրինականացման մասին» N 440 որոշումը:*
*2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝* *Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ*

*08 ապրիլի 2021թ.*
*ք.Հրազդան*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*08 ապրիլի 2021թվականի N 468*

## *ՔՆԱՐԻԿ ՄԱՐԳԱՐՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՎՏՈՏՆԱԿԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՓԱՍՏԱՑԻ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 43 հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, հիմք ընդունելով Հրազդան համայնքի ավագանու 2021 թվականի փետրվարի 25-ի N 37 որոշումը և Քնարիկ Մարգարյանի 2021 թվականի հունվարի 27-ի դիմումը.*

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝*

*1.Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամասի 98 շենքի թիվ 3 բնակարանի բնակչուհի Քնարիկ Հովակիմի Մարգարյանին ուղղակի վաճառքով օտարել Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամաս 98/15 հասցեում գտնվող սեփականության իրավունքով իրեն պատկանող ավտոտնակի պահպանման և սպասարկման համար փաստացի օգտագործվող (սեփականության (օգտագործման) իրավունքի վկայական 1257901, տրված՝ 2005 թվականի մարտի 05-ին) համայնքային սեփականություն հանդիսացող Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի ցանկում չդասվող 30.6 քմ մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասը՝ 209150 (երկու հարյուր ինը հազար մեկ հարյուր հիսուն) դրամ կադաստրային արժեքով:*
*2.Քնարիկ Հովակիմի Մարգարյանի հետ 30.6 քմ մակերեսով հողամասի համար կնքել հողամասի առուվաճառքի պայմանագիր: Պայմանագրի կետերի կատարման հսկողությունը վերապահել համայնքապետարանի աշխատակազմի տարածքային զարգացման, հողային կադաստրի և գյուղատնտեսության բաժնին:*
*3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:*

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

*08 ապրիլի 2021թ.*
*ք.Հրազդան*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*08 ապրիլի 2021թվականի N 469*

### *ԱՌԵՎՏՐԻ, ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԵՎ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՇԵՆՔԻ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑԱԾ ՄԱՍԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ*

*Համաձայն Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքի 7-րդ հոդվածի 7-րդ մասի, Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ բաժնի, հիմք ընդունելով 2021 թվականի հունվարի 29-ին <<Հաբշին նախագիծ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից տրված տեխնիկական եզրակացությունը, «ԳԵՈԼԵՆԴ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից չափագրված շինության հատակագիծը և Մարիաննա Ղազարյանի 2021 թվականի հունվարի 21-ի դիմումը.*

## *<u>Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ</u>՝*

*1.Օրինական ճանաչել Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Երևանյան փողոցի 8-րդ շենքի թիվ 16 բնակարանի բնակչուհի Մարիաննա Ռազմիկի Ղազարյանի կողմից Հրազդան քաղաքի Հարավային թաղամասի Սպանդարյան փողոց թիվ 5/14-5/15 հասցեում գտնվող, սեփականության իրավունքով իրեն պատկանող (սեփականության իրավունքի վկայական՝ N 2624742, տրված՝ 2010 թվականի հոկտեմբերի 21-ին) բնակավայրերի հասարակական կառուցապատման հողամասում առևտրի, հանրային սննդի և կենցաղային սպասարկման շենքի ինքնակամ կառուցած 91.33 քմ արտաքին մակերեսով մասը:*
*2.Սույն որոշման 1-ին կետում առևտրի, հանրային սննդի և կենցաղային սպասարկման շենքի օրինական ճանաչված մասի օրինականացման վճարը սահմանել՝ 310 600 (երեք հարյուր տասը հազար վեց հարյուր) դրամ և վճարել Հրազդան համայնքի բյուջեի թիվ 900125001504 գանձապետական հաշվին:*
*3.Կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չի ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում*

կամ կառուցված չի քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:
4.Որոշման կատարման կազմակերպումն ու վերահսկողությունը վերապահել Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի տարածքային զարգացման, հողային կադաստրի և գյուղատնտեսության բաժնին:
5.Սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված գումարները 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:
6.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

08 ապրիլի 2021թ.
ք.Հրազդան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

---

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *Ո Ր Ո Շ Ու Մ*

*09 ապրիլի 2021թվականի N 470*

*ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 45-րդ հոդվածի 1-ի մասի 4-րդ կետի, հիմք ընդունելով դիմումատուի հայտը և Հրազդան համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 14-ի N 147-Ն որոշմամբ հաստատված հավելվածը.*

*<u>Ո Ր Ո Շ Ու Մ  Ե Մ</u>՝*

*1.Անհատ ձեռնարկատեր Կարեն Հակոբյանին տալ հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվություն՝ մինչև 2021 թվականի հունիսի 30-ը՝ երկրորդ եռամսյակի համար /գրանցման հասցե՝ Կոտայքի մարզ, գյուղ Մեղրաձոր, տուն 5, գործունեության հասցե՝ քաղաք Հրազդան, Սպանդարյան 2 հանրային սննդի օբյեկտ՝ հիմնական շինություն, մինչև 26 քառակուսի մետր մակերես/:*
*2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:*

***ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝*** ***Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ***

*09 ապրիլի 2021թ.*
*ք.Հրազդան*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*09 ապրիլի 2021թվականի N 471*

## *ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԵՂՈՒԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 9- րդ կետի, հիմք ընդունելով դիմումատուի հայտը և Հրազդան համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 14-ի N147-Ն որոշմամբ հաստատված հավելվածը.*

*<u>Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ</u>՝*

*1.Անհատ ձեռնարկատեր Գարիկ Հարությունյանին տալ տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվություն մինչև 2021 թվականի հունիսի 30-ը՝ առաջին կիսամյակի համար /գրանցման հասցե՝ քաղաք Հրազդան, Շահումյան փողոց 68/3, գործունեության հասցե՝ քաղաք Հրազդան, Սպանդարյան 1, առևտրի օբյեկտ՝ հիմնական շինություն/:*
*2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝* *Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ*

*09 ապրիլի 2021թ*
*ք.Հրազդան*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ**
**ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ**

---

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*12 ապրիլի 2021թվականի N 472*

*ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ
ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջների.*

*Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ ՝*

*1.Հրազդան համայնքին սեփականության իրավունքով պատկանող Մաքրավան թաղամասում գտնվող 600.0քմ մակերեսով 0430-0037 ծածկագրով հողամասին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, քաղաք Հրազդան, Մաքրավան թաղամաս, Հ. Աճառյան փողոց 5:*
*2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:*

***/ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ*** ***Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ***

*12 ապրիլի 2021թ.*
*ք.Հրազդան*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*12 ապրիլի 2021թվականի N 473*

### *ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի ավագանու 2021 թվականի ապրիլի 06-ի N 81 որոշումը.*

*<u>Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Ե Մ</u>՝*

*1.Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 42 շենքի 29.38 քառակուսի մետր մակերեսով N32 բնակարանը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական՝ N29122020-07-0087, տրված՝ 29.12.2020 թվականին) անհատույց օտարել գույքը տիրապետող (արխիվային տեղեկանք N 1373, տրված՝ 16.11.2020 թվականին) Ահդա Նիկոլայի Գրիգորյանին (ծնված՝22.07.1957 թվականին, անձնագիր՝ AT0293142, տրված՝ 30.10.2019 թվականին, 049-ի կողմից):*
*2.Համասեփականատեր ճանաչել Ահդա Նիկոլայի Գրիգորյանի որդուն՝ Արման Ռաֆիկի Գրիգորյանին:*
*3. Սահմանել, որ սեփականության իրավունքի գրանցման պահից 5 տարվա ընթացքում գույքն օտարելու դեպքում անհրաժեշտ է Հրազդանի համայնքապետարանի համաձայնությունը:*
*4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:*

***ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝*** ***Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ***

*12 ապրիլի 2021թ.*
*ք.Հրազդան*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ**
**ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ**

---

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*12 ապրիլի 2021թվականի N 474*

*ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի ավագանու 2021 թվականի ապրիլի 06-ի N 80 որոշումը.*

*<u>Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Ե Մ</u>՝*

*1. Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 16 շենքի 38.35 քառակուսի մետր մակերեսով N3 բնակարանը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական՝ N16022021-07-0065, տրված՝16.02.2021 թվականին) անհատույց օտարել գույքը տիրապետող (արխիվային քաղվածք N 985, տրված՝ 17.05.2016 թվականին) Մայրանուշ Սերոբի Մովսիսյանին (ծնված՝ 16.02.1946 թվականին, անձնագիր՝AU0397267, տրված՝ 20.10.2020 թվականին, 049-ի կողմից):*
*2. Սահմանել, որ սեփականության իրավունքի գրանցման պահից 5 տարվա ընթացքում գույքն օտարելու դեպքում անհրաժեշտ է Հրազդանի համայնքապետարանի համաձայնությունը:*
*3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:*

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

*12 ապրիլի 2021թ.*
*ք.Հրազդան*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*12 ապրիլի 2021թվականի N 475*

## *ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի ավագանու 2021 թվականի ապրիլի 06-ի N 82 որոշումը.*

*<u>Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Ե Մ</u>՝*

*1. Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 3 շենքի 25.02 քառակուսի մետր մակերեսով N18 բնակարանը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական՝ N29062020-07-0054, տրված՝ 29.06.2020 թվականին) անհատույց օտարել գույքը տիրապետող Ստեփան Վարազդատի Մարտիրոսյանին (ծնված՝ 24.05.1959 թվականին, նույնականացման քարտ՝ N001802578, տրված՝10.02.2014 թվականին, 049-ի կողմից):*
*2. Համասեփականատերեր ճանաչել.*
*1)Ծովինար Հայրապետի Թովմասյանին՝ կինը,*
*2)Վարազդատ Ստեփանի Մարտիրոսյանին՝ տղան,*
*3)Լուսինե Ռազմիկի Հարությունյանին՝ հարսը,*
*4)Մարի Վարազդատի Մարտիրոսյանին՝ թոռը,*
*5)Նոնա Վարազդատի Մարտիրոսյանին՝ թոռը:*
*3. Սահմանել,որ սեփականության իրավունքի գրանցման պահից 5 տարվա ընթացքում գույքն օտարելու դեպքում անհրաժեշտ է Հրազդանի համայնքապետարանի համաձայնությունը:*
*4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝* *Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ*

*12 ապրիլի 2021թ.*
*ք.Հրազդան*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *Ո Ր Ո Շ ՈՒ Մ*

*12 ապրիլի 2021թվականի N 476*

### *ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով,հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի ավագանու 2021 թվականի ապրիլի 06-ի N 83 որոշումը.*

*<u>Ո Ր Ո Շ ՈՒ Մ  Ե Մ</u>՝*

*1. Հրազդան համայնքի սեփականություն համարվող Հրազդան քաղաքի Հարավային թաղամասի Երևանյան փողոցի 34 հասցեում գտնվող նախադպրոցական հիմնարկի շենքի (անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման վկայական՝ N1120518, տրված՝ 26.04.2011թվականին) 1-ին հարկի 20,77քմ և 2-րդ հարկի 50,05քմ մակերեսներով տարածքները հինգ տարի ժամկետով անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնին:*
*2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:*

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

*12 ապրիլի 2021թ.*
*ք.Հրազդան*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*12 ապրիլի 2021թվականի N 477*

## *ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով,հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի ավագանու 2021 թվականի ապրիլի 06-ի N 84 որոշումը.*

*Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝*

*1. Հրազդան համայնքի սեփականություն հանդիսացող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N11072018-07-0067, տրված՝ 11.07.2018 թվականին) Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 4-րդ փողոցի 20/3 հասցեում գտնվող մշակույթի կենտրոնի շենքից 753,05քմ մակերեսով տարածքը 25 տարի ժամկետով օգտագործման իրավունքով տրամադրել «ՀՈՎԻԿ ԱՎԱԳՅԱՆ ԺՈՐԱՅՀ» անհատ ձեռնարկատիրոջը (պետական հաշվառման համար՝85.1156293, ՀՎՀՀ՝40595153)՝մասնաշենքի վրա 20.000.000 (քսան միլիոն) դրամ գումարի չափով կապիտալ ծախսեր կատարելու պայմանով:*
*2. Սահմանել, որ մասնաշենքը կարող է օգտագործվել միայն կրթական և (կամ) մարզամշակութային նպատակներով:*
*3. Կապիտալ ծախսերը կատարել հետևյալ պայմաններով.*
*1) մինչև 2021 թվականի դեկտեմբերի 31-ը կատարել 5.000.000 (հինգ միլիոն) դրամ գումարի չափով կապիտալ ծախսեր,*
*2) մինչև 2022 թվականի դեկտեմբերի 31-ը կատարել 5.000.000 (հինգ միլիոն) դրամ գումարի չափով կապիտալ ծախսեր,*
*3) մինչև 2023 թվականի դեկտեմբերի 31-ը կատարել 5.000.000 (հինգ միլիոն) դրամ գումարի չափով կապիտալ ծախսեր,*
*4) մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ը կատարել 5.000.000 (հինգ միլիոն) դրամ գումարի չափով կապիտալ ծախսեր:*
*4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:*

***ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝*** ***Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ***

*12 ապրիլի 2021թ.*
*ք.Հրազդան*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*12 ապրիլի 2021թվականի N 478*

*ԱՅԳԵՏՆԱԿԻ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅԱԾ ԿԻՍԱՆԿՈՒՂԻ, ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅԱԾ ԱՌԱՋԻՆ ՀԱՐԿԻ, ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅԱԾ ԲԱՑ ՊԱՏՇԳԱՄԲԻ, ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅԱԾ ՀԵՆԱՊԱՏԻ, ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ*

*Համաձայն քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ բաժնի պահանջների, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35 հոդվածի 1-ին մասի 22 կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի և հիմք ընդունելով Արամ Նորայրի Հարությունյանի 2021 թվականի ապրիլի 9-ի դիմումը, Չարենցավան նոտարական տարածքի նոտարի կողմից 2021 թվականի ապրիլի 8-ին տրված ժառանգության իրավունքի վկայագիրը՝ գրանցված գրանցամատյանում 772, ժառանգական գործ թիվ 135, բանվորների և ծառայողների այգեգործական ընկերության կողմից 1988 թվականի օգոստոսի 28-ին տրված այգեգործի անդամատոմսը, համապատասխան որակավորում ունեցող կազմակերպության կողմից չափագրված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագիծը.*

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝*

*1.Օրինական ճանաչել Արամ Նորայրի Հարությունյանին պատկանող Հրազդան քաղաքի Վերին Աղբյուրակ թաղամասում գտնվող 500.0 քմ հողամասում ինքնակամ կառուցված 43.16 քմ արտաքին մակերեսով կիսանկուղը, ինքնակամ կառուցած 41.70 քմ արտաքին մակերեսով առաջին հարկը, ինքնակամ կառուցած 21.14 քմ մակերեսով բաց պատշգամբը, ինքնակամ կառուցած 3.53 քմ մակերեսով հենապատը:*
*2.Հողամասի սահմանները որոշվում են ԱՁ Աշոտ Հակոբյանի կողմից չափագրված և Հրազդան համայնքի ղեկավարի կողմից հաստատված հողամասի հատակագծով:*
*3.Արամ Նորայրի Հարությունյանին պատկանող այգետնակին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, քաղաք Հրազդան, Վերին Աղբյուրակ թաղամաս, Այգեգործական զանգված, 5-րդ փողոց 37:*
*4.Այգետնակի ինքնակամ կառուցած կիսանկուղը, ինքնակամ կառուցած առաջին*

*հարկը, ինքնակամ կառուցած բաց պատշգամբը, ինքնակամ կառուցած հենապատը, կառուցվել է մինչև 2001 թվականի մայիսի 15-ը, օրինականացման համար նախատեսված վճարը չի գանձվում:*

*5. Այգետնակի ինքնակամ կառուցած կիսանկուղի, ինքնակամ կառուցած առաջին հարկի, ինքնակամ կառուցած բաց պատշգամբի, ինքնակամ կառուցած հենապատի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չեն սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:*

*6.Որոշման կատարման կազմակերպումն ու վերահսկողությունը վերապահել Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի տարածքային զարգացման, հողային կադաստրի և գյուղատնտեսության բաժնին:*

*7.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:*

***ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ***

*12 ապրիլի 2021թ.*
*ք.Հրազդան*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *Ո Ր Ո Շ ՈՒ Մ*

*12 ապրիլի 2021թվականի N 479*

## *ՀՐԱԶԴԱՆ ՔԱՂԱՔԻ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԹԱՂԱՄԱՍԻ ՍՊԱՆԴԱՐՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 22/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՕՐԻՆԱԿԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ԱՅԴ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԿԻՑ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՍԱՀՄԱՆԱԶԱՏՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱԻԴԱ ՎԱՉԱԳԱՆԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» օրենքի 1-ին և 2-րդ հոդվածների, մասին Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջի և հաշվի առնելով, որ նշված հողատարածքը չի դասվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի շարքին, չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և հիմք ընդունելով Աիդա Վաչագանի Հովհաննիսյանի 2021 թվականի ապրիլի 8-ի դիմումը, Հրազդանի համայնքապետարանի <<Աղբյուրակ թաղամաս>>համատիրության կառավարչի կողմից 2021 թվականի ապրիլի 6-ին տրված տեղեկանքը, համապատասխան որակավորում ունեցող կազմակերպության կողմից չափագրված և տրված շինությունների, դրանց պահպանման և սպասարկման համար հողամասի մակերեսների համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագիծը.*

## *<u>Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ</u>*՝

*1. Վերականգնել Հրազդան քաղաքի Հարավային թաղամասի Սպանդարյան փողոց թիվ 22/1 հասցեում Աիդա Վաչագանի Հովհաննիսյանին պատկանող 400.0 քմ մակերեսով հողամասի և նրա վրա կառուցած 156.67 քմ արտաքին մակերեսով բնակելի տան սեփականության իրավունքը:*

*2.Վերականգնել Հրազդան քաղաքի Հարավային թաղամասի Սպանդարյան փողոց թիվ 22/1 հասցեում գտնվող Աիդա Վաչագանի Հովհաննիսյանին պատկանող 400.0 քմ մակերեսով օրինական հողամասին կից ավել օգտագործվող սահմանազատված 300.0քմ մակերեսով հողամասի նկատմամբ Աիդա Վաչագանի Հովհաննիսյանի սեփականության իրավունքը:*

3.Բնակելի տունը կառուցվել է մինչև 2001 թվականի մայիսի 15-ը, օրինականացման համար նախատեսված վճարները չեն գանձվում:

4.Հողամասի սահմանները որոշվում են <<ԳԵՈԼԵՆԴ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից չափագրված և Հրազդան համայնքի ղեկավարի կողմից հաստատված հողամասի հատակագծով:

5.Բնակելի տունը և այդ հողամասին կից ավել օգտագործվող սահմանազատված հողամասը համապատասխանում են քաղաքաշինական նորմերին և վտանգ չեն սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը:

6.Ահրա Վաչագանի Հովհաննիսյանին պատկանող բնակելի տունը՝ պահպանման և սպասարկման համար առանձնացված հողամասով տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, քաղաք Հրազդան, Հարավային թաղամաս, Սպանդարյան փողոց թիվ 22/1 :

7.Առաջարկել Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեի միավորված մարզերի ստորաբաժանմանը՝ գրանցել քաղաքացի Ահրա Վաչագանի Հովհաննիսյանին սեփականության իրավունքներն ամրագրված հողամասի, բնակելի տան նկատմամբ և տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական:

8.Որոշման կատարման կազմակերպումն ու վերահսկողությունը վերապահել Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի տարածքային զարգացման, հողային կադաստրի և գյուղատնտեսության բաժնին:

9.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

12 ապրիլի 2021թ.
ք.Հրազդան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ**
**ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ**

---

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*12 ապրիլի 2021թվականի N 480*

## *ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, հիմք ընդունելով դիմումատուի հայտը և Հրազդան համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 14-ի N 147-Ն որոշմամբ հաստատված հավելվածը.*

*<u>Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ</u>՝*

*1.Անհատ ձեռնարկատեր Ռուզաննա Հայրապետյանին տալ ոգելից խմիչքների վաճառքի թույլտվություն մինչև 2021 թվականի հունիսի 30-ը՝ երկրորդ եռամսյակի համար:*
*2.Անհատ ձեռնարկատեր Ռուզաննա Հայրապետյանին տալ ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների (բացառությամբ բժշկական նշանակության ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների) վաճառքի թույլտվություն մինչև 2021 թվականի հունիսի 30-ը՝ երկրորդ եռամսյակի համար /գրանցման հասցե՝ քաղաք Հրազդան, Երևանյան 39ա, գործունեության հասցե՝ քաղաք Հրազդան, Երևանյան խճուղի 39/3, առևտրի օբյեկտ՝ հիմնական շինություն, մինչև 26 քառակուսի մետր մակերես/:*
*3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:*

***ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ***

*12 ապրիլի 2021թ.*
*ք.Հրազդան*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*12 ապրիլի 2021թվականի N 481*

## *ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, հիմք ընդունելով դիմումատուի հայտը և Հրազդան համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 14-ի N 147-Ն որոշմամբ հաստատված հավելվածը.*

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝*

*1.Անհատ ձեռնարկատեր Մարինե Կիրակոսյանին տալ ոգելից խմիչքների վաճառքի թույլտվություն մինչև 2021 թվականի հունիսի 30-ը՝ երկրորդ եռամսյակի համար:*
*2.Անհատ ձեռնարկատեր Մարինե Կիրակոսյանին տալ ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների (բացառությամբ բժշկական նշանակության ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների) վաճառքի թույլտվություն մինչև 2021 թվականի հունիսի 30-ը՝ երկրորդ եռամսյակի համար /գրանցման հասցե՝ քաղաք Հրազդան, Կենտրոն թաղամաս 35/6, գործունեության հասցե՝ քաղաք Հրազդան, Կենտրոն թաղամաս 35/1, առևտրի օբյեկտ՝ հիմնական շինություն, մինչև 100 քառակուսի մետր մակերես/:*
*3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:*

***ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝*** ***Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ***

*12 ապրիլի 2021թ.*
*ք.Հրազդան*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
## ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am


# *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*12 ապրիլի 2021թվականի N 482*

### *ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, հիմք ընդունելով դիմումատուի հայտը և Հրազդան համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 14-ի N 147-Ն որոշմամբ հաստատված հավելվածը.*

### *<u>Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ</u>՝*

*1.Անհատ ձեռնարկատեր Բուղենիկ Գաբրիելյանին տալ ոգելից խմիչքների վաճառքի թույլտվություն մինչև 2021 թվականի հունիսի 30-ը՝ երկրորդ եռամսյակի համար:*

*2.Անհատ ձեռնարկատեր Բուղենիկ Գաբրիելյանին տալ ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների (բացառությամբ բժշկական նշանակության ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների) վաճառքի թույլտվություն մինչև 2021 թվականի հունիսի 30-ը՝ երկրորդ եռամսյակի համար /գրանցման հասցե՝ քաղաք Հրազդան, Վանատուր 52, գործունեության հասցե՝ քաղաք Հրազդան, Վանատուր 52, առևտրի օբյեկտ՝ հիմնական շինություն, մինչև 26 քառակուսի մետր մակերես/ :*

*3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:*

***ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝*** ***Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ***

*12 ապրիլի 2021թ.*
*ք.Հրազդան*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *Ո Ր Ո Շ ՈՒ Մ*

*12 ապրիլի 2021թվականի N 483*

## *ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԻՐԱՑՄԱՆ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 45-րդ հոդվածի 1-ի մասի 2-րդ և 4-րդ կետերի, հիմք ընդունելով դիմումատուի հայտը և Հրազդան համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 14-ի N 147-Ն որոշմամբ հաստատված հավելվածը.*

*Ո Ր Ո Շ ՈՒ Մ  Ե Մ՝*

*1.Անհատ ձեռնարկատեր Արթուր Աղամիրյանին տալ ոգելից և ալկոհոլային խմիչքների իրացման և հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվություն՝ մինչև 2021 թվականի հունիսի 30-ը՝ երկրորդ եռամսյակի համար /գրանցման հասցե՝ քաղաք Երևան, գործունեության հասցե՝ քաղաք Հրազդան,Սպանդարյան 15, հանրային սննդի օբյեկտ՝ հիմնական շինություն, մինչև 26 քառակուսի մետր մակերես/:*
*2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝* *Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ*

*12 ապրիլի 2021թ.*
*ք.Հրազդան*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *ՈՐՈՇՈՒՄ*

*12 ապրիլի 2021թվականի N 484*

## *ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> օրենքի 9-րդ հոդվածի 14-րդ կետի, հիմք ընդունելով դիմումատուի հայտը և Հրազդան համայնքի ավագանու 2020 թվական իդեկտեմբերի 14-ի N147-Ն որոշմամբ հաստատված հավելվածը.*

*ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝*

*1.Անհատ ձեռնարկատեր Արթուր Աղամիրյանին տալ 2 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով արտաքին գովազդ տեղադրելու թույլտվություն 2021 թվականի ապրիլ, մայիս, հունիս ամիսների համար: Գովազդի տեղադրման հասցեն՝ քաղաք Հրազդան, Սպանդարյան 15:*
*2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:*

***ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ***

*12 ապրիլի 2021թ.*
*ք.Հրազդան*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*13 ապրիլի 2021թվականի N 485*

## *ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅԱԾ ԿԻՍԱՆԿՈՒՂԻ ԵՎ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅԱԾ ԱՌԱՋԻՆ ՀԱՐԿԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ․ՄԱՍԻՆ*

*Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ մասով, Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ բաժնի պահանջներով և հիմք ընդունելով Արթուր Արշավիրի Պողոսյանի լիազոր անձ Արմեն Արթուրի Պողոսյանի 2021 թվականի ապրիլի 9-ի դիմումը, Ժողովրդական դեպուտատների Հրազդանի քաղխորհրդի գործկոմի 1990 թվականի օգոստոսի 30-ի թիվ 30 որոշումը, համապատասխան որակավորում ունեցող կազմակերպության կողմից չափագրված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագիծը․*

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝*

*1.Օրինական ճանաչել Արթուր Արշավիրի Պողոսյանին պատկանող Հրազդան քաղաքի Ջրառատ նորակառույց թաղամասի թիվ 725 հասցեում գտնվող 600.0 քմ հողամասում բնակելի տան ինքնակամ կառուցած 125.25քմ արտաքին մակերեսով կիսանկուղը և ինքնակամ կառուցած 125.25քմ արտաքին մակերեսով առաջին հարկը:*

*2.Հողամասի սահմանները որոշվում են ԱՁ Աշոտ Հակոբյանի կողմից չափագրված և Հրազդան համայնքի ղեկավարի կողմից հաստատված հողամասի հատակագծով:*

*3. Բնակելի տան ինքնակամ կառուցած կիսանկուղը և ինքնակամ կառուցած առաջին հարկը կառուցվել է մինչև 2001 թվականի մայիսի 15-ը, օրինականացման համար նախատեսված վճարները չեն գանձվում:*

*4.Բնակելի տան ինքնակամ կառուցած կիսանկուղի և ինքնակամ կառուցած առաջին հարկի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չեն սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:*

*5.Որոշման կատարման կազմակերպումն ու վերահսկողությունը վերապահել Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի տարածքային զարգացման, հողային կադաստրի և գյուղատնտեսության բաժնին:*
*6.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:*

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

*13 ապրիլի 2021թ.*
*ք.Հրազդան*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*13 ապրիլի 2021թվականի N 486*

*ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՍՑԵՆ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ, 8-րդ բաժինների պահանջների, հիմք ընդունելով Գոռ Գալստյանի 2021 թվականի ապրիլի 09-ի դիմումը.*

*Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Ե Մ ՝*

*1.Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 58 շենքի թիվ 37 բնակարանի բնակիչ Գոռ Գալստյանին կառուցապատման իրավունքով տրամադրված /կառուցապատման իրավունքի վկայական N 2635267, տրված՝ 2011 թվականի մայիսի 26-ին/ Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 29 շենքին հարող տարածք 1-2 հողամասի հասցեն փոփոխել՝ Կոտայքի մարզ, քաղաք Հրազդան, Միկրոշրջան թաղամաս 29/1-2 հասցեով:*
*2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝* *Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ*

*13 ապրիլի 2021թ.*
*ք.Հրազդան*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
## ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *Ո Ր Ո Շ ՈՒ Մ*

*13 ապրիլի 2021թվականի N 487*

### *ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ, ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՄԱՁԱՅՆԵՑՆԵԼՈՒ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշմամբ հաստատված հավելվածի և 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 6-րդ բաժնի, հիմք ընդունելով Գարիկ Սիմոնյանի 2021 թվականի ապրիլի 13-ի դիմումը.*

## *<u>Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ</u>՝*

*1. Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 204 շենքի թիվ 11 բնակարանի բնակիչ Գարիկ Սլավիկի Սիմոնյանին սեփականության իրավունքով պատկանող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վկայական՝ N 23032020-07-0004, ծածկագիր՝ 5KRHCPBH6DGA) Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 13-րդ փողոց թիվ 4/1 հասցեում գտնվող 67.5 քմ մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը բնակավայրերի բնակելի կառուցապատումից փոփոխել բնակավայրերի հասարակական կառուցապատման:*

*2.Համաձայնեցնել կառուցապատող Գարիկ Սլավիկի Սիմոնյանին նախագծային փաստաթղթերը և տալ շինարարության թույլտվություն Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 13-րդ փողոց թիվ 4/1 հասցեում գտնվող 67.5 քմ մակերեսով հողամասում առևտրի, հանրային սննդի և կենցաղային սպասարկման շենք կառուցելու համար:*

*3.Շինարարական աշխատանքները սկսելուց 3 (երեք) օր առաջ ներկայացնել N 2-5 ձևի տեղեկանք:*

*4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:*

***ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝*** ***Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ***

*13 ապրիլի 2021թ.*
*ք.Հրազդան*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*13 ապրիլի 2021թվականի N 488*

## *ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑԱԾ ԱՌԵՎՏՐԻ, ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԵՎ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՇԵՆՔ, ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՊԱՐՍՊԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱԿԱՆ ՇԵՆՔԻ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքի 7-րդ հոդվածի 7-րդ մասի, Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ բաժնի, 2002 թվականի փետրվարի 2-ի թիվ 88 որոշմամբ հաստատված կարգի, հիմք ընդունելով 2021 թվականի մարտի 03-ին <<Հաբշին նախագիծ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից տրված տեխնիկական եզրակացությունը, «ԳԵՈԼԵՆԴ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից չափագրված շինության հատակագիծը և Շողիկ Ալեքսանյանի 2021 թվականի հունվարի 27-ի դիմումը.*

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝*

*1.Օրինական ճանաչել Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Վանատուր թաղամասի թիվ 369 տան բնակչուհի Շողիկ Գուրգենի Ալեքսանյանի կողմից Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի Զորավար Անդրանիկի պողոտա թիվ 70 հասցեում գտնվող, սեփականության իրավունքով իրեն պատկանող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական՝ N 20112018-07-0058, ծածկագիր՝ BIZPYN8FBAGJ) բնակավայրերի հասարակական կառուցապատման հողամասում ինքնակամ կառուցած առևտրի, հանրային սննդի և կենցաղային սպասարկման շենք, շինությունները.*

*1) շինություն N1՝ 107.37քմ արտաքին մակերեսով, օրինականացման վճարը սահմանել՝ 365 100 (երեք հարյուր վաթսունհինգ հազար մեկ հարյուր) դրամ,*

*2)շինություն N2՝ 356.01քմ արտաքին մակերեսով, օրինականացման վճարը սահմանել՝*

*1 210 500 (մեկ միլիոն երկու հարյուր տասը հազար հինգ հարյուր) դրամ,*
*3)շինություն N3՝ 83.36քմ արտաքին մակերեսով, օրինականացման վճարը սահմանել՝ 283 500 (երկու հարյուր ութսուներեք հազար հինգ հարյուր) դրամ,*
*4)շինություն N4՝ 356.91քմ արտաքին մակերեսով, օրինականացման վճարը սահմանել՝ 1 213 500 (մեկ միլիոն երկու հարյուր տասներեք հազար հինգ հարյուր) դրամ,*
*5)շինություն N5՝ 42.92քմ արտաքին մակերեսով, օրինականացման վճարը սահմանել՝ 146 000 (մեկ հարյուր քառասունվեց հազար) դրամ,*
*6)շինություն N6՝ 52.16քմ արտաքին մակերեսով օրինականացման վճարը սահմանել՝ 177 400 (մեկ հարյուր յոթանասունյոթ հազար չորս հարյուր) դրամ,*
*7)շինություն N7՝ 14.96քմ արտաքին մակերեսով, օրինականացման վճարը սահմանել՝ 50 900 (հիսուն հազար ինը հարյուր) դրամ,*
*8)գոյություն ունեցող շինության ինքնակամ կառուցած մասը (շինություն N8)՝ 494.25քմ արտաքին մակերեսով, օրինականացման վճարը սահմանել՝ 1 680 450 (մեկ միլիոն վեց հարյուր ութսուն հազար չորս հարյուր հիսուն) դրամ,*
*9) պարիսպը՝ 31.53քմ մակերեսով, օրինականացման վճարը սահմանել՝ 107 300 (մեկ հարյուր յոթ հազար երեք հարյուր) դրամ և վճարել Հրազդան համայնքի բյուջեի թիվ 900125001504 գանձապետական հաշվին :*
*2. Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Վանատուր թաղամասի թիվ 369 տան բնակչուհի Շողիկ Գուրգենի Ալեքսանյանին պատկանող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների գրանցման վկայական N 20112018-07-0058, ծածկագիր՝ BIZPYN8FBAGJ) Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի Զորավար Անդրանիկի պողոտա թիվ 70 հասցեում գտնվող հասարակական կառուցապատման անավարտ շենքի գործառական նշանակությունը փոփոխել առևտրի, հանրային սննդի և կենցաղային սպասարկման շենքի:*
*3.Կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չի ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չի քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:*
*4.Որոշման կատարման կազմակերպումն ու վերահսկողությունը վերապահել Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի տարածքային զարգացման, հողային կադաստրի և գյուղատնտեսության բաժնին:*
*5.Սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված գումարները 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:*
*6.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:*

***ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ***

*13 ապրիլի 2021թ.*
*ք.Հրազդան*